ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք, ՀՀ,
Արարատի մարզ, գ. Աբովյան, Հեռ. (098)550001 ,
abovyan.ararat@mta.gov.am

N 175
17 դեկտեմբեր 2015թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ Ռ. Աբրահամյան

Կից ներկայացնում ենք թիվ 45, թիվ 46, թիվ 47, թիվ 48, թիվ 49 որոշումները.

Առդիր 8 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>>ԴԵԿՏԵՄԲԵՐԻ՝ 2015 թվականի N 45

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 12-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով .

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու հերթական թիվ 12-րդ նիստի օրակարգը՝

1. 2015 թվականի գույքագրման հանձնաժողովի ցուցակի հաստատման հարցը

2. 2016 թվականի <<Տեղական տուրքերի և վճարների>> մասին համայնքի ղեկավարի կողմից ավագանու նիստի հաստատմանը ներկայացվող դրույքաչափերի հաստատման մասին

3. Աբովյանի համայնքի բյուջեի ծախսային մասում փոփոխություն կատարելու մասին

4. Աբովյան համայնքում մանկապարտեզ կառուցելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>>ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 46

2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջները.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել 2015 թվականի գույքագրող հանձնաժողովի կողմից ներկայացված համայնքի սեփականություն հանդիսացող՝ գյուղապետարանի գույքի, մշակույթի տան գույքի և գրադարանի գույքի ամենամյա գույքագրման ցանկը՝ համաձայն հավելվածի.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ կողմ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 47

2016 ԹՎԱԿԱՆԻ <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ>> ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով և <<Տեղական Տուրքերի և Վճարների Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նորշենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝

7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

10000 դրամ

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

13000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ:

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնոդ այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի

վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ.

բ) ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 դրամ:

5. Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար

տեղական տուրքը սահմանվում է՝

ա) գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար՝ ընթացիկ տարվա համար՝50.000 դրամ.

բ) գյուղատնտեսական մթերքների համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 250 դրամ.

գ) այլ ապրանքների (այդ թվում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի

արտադրանքի) վաճառքի համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները

(սաունաները), զվարճանքի օբյեկտները՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու

թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) խաղատների համար՝ 500 000դրամ.

բ) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դր.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս

արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)

արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ:

Սույն կետի «գ» ենթակետով սահմանված տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվում է նաև համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

9. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5 000 դրամ:

10. 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառվել է 0,5 գործակիցը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՌՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՍՆԱ ՑՐԱՇԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ * 04201558 * ԷՋՄԻԱԾՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015 թվականի N 48

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Վարչական բյուջեյի պահուստային ֆոնդից 528,0 հազ. դրամ գումարը տեղափոխել ֆոնդային բյուջե:

Ֆոնդային բյուջեյից 528,0 հազ. դրամ գումարը և ֆոնդային բյուջեյի պահուստային ֆոնդից 730,0 հազ. դրամ գումարը համապատասխանաբար ուղղել հանգստի գոտու և զբոսայգու կառուցում և պահպանում ծրագրի 5112 հոդվածին՝ շենքերի և շինությունների կառուցում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 49

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության << Հողային Օրենսգրքի>>74-րդ և 75-րդ հոդվածներով.

համայնքի ավագանին որոշում է՝

1.Համայնքի սեփականությունը համարվող հողամասերից՝ Ս. Թեիլերյան փողոցում գտնվող 2500,0 քմ հողամասը, տրամադրել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ծրագրերի շրջանակում Աբովյան համայնքում կառուցելու մանկապարտեզ:

2. Համայնքի ղեկավարին լիազորել օրենքով սահմանված կարգով կատարել նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխումը հասարակական կառուցապատման:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԱՌՆ կողմ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 04201558